

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) գնումների կազմակերպման բաժնի (այսուհետ՝ Բաժին) կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ հանձնարարականների և հատուկ գործառույթների համակարգմամբ, իրականացմամբ և գործընթացների վերահսկմամբ և Բաժնի գործող անձնակազմով դրանք իրականացնելու անհնարինությամբ:

Փորձագետի աշխատանքային ռեսուրսներն անբողոքությամբ ներգրավված են հետևյալ աշխատանքներում.

Ա. Կոմիտեի նպատակային գործառույթներն իրականացնող կառույցների առաջիկա էքսիզային, նախագծային, վերահատակագծման, վերանորոգման և կահավորման աշխատանքների նախագծային և նախահաշվային փաստաթղթերի կազմում, մասնավորապես՝

- Կոմիտեի աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով առաջիկայում նախատեսված կառուցվող շենք-շինությունների նախագծային փաթեթների մշակման աշխատանքների համակարգում, որոնք հիմք կհանդիսանան նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար,

- վերաբրենդավորման շրջանակում Կոմիտեի գործառույթների իրականացման համար սպասարկման գրասենյակների, առանձնացված ստորաբաժանումների և Կոմիտեի վարչական շենքի վերահատակագծման և էքսիզային փաթեթների կազմում՝ համաձայն բրենդային ուղեցույցի,

- կապիտալ շինարարական կամ վերանորոգման աշխատանքների նախագծային փաթեթների համար հիմք հանդիսացող նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություններ, չափագրումներ և այլ դիտարկումներ,

- Կոմիտեի գործառույթների իրականացման համար սպասարկման գրասենյակների, առանձնացված ստորաբաժանումների և Կոմիտեի վարչական շենքի համալիր կամ մասնակի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար թերությունների ակտի տրամադրում,

- Սահմանված լիազորությունների շրջանակներում վերանորոգման կամ կապիտալ շինարարական աշխատանքների համակարգում, վերահսկում և կազմակերպում և հանդես գալով որպես Կոմիտեի ներկայացուցիչ՝ համագործակցելով շինարարական կազմակերպությունների և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ:

Բ. Կոմիտեի գործառնություններով պայմանավորված մասնավորապես՝

- Կոմիտեի ընթացիկ կառուցվածքային փոփոխությունների արդյունքում աշխատակիցների վերադասավորության իրականացում՝ հաշվի առնելով վարչությունների գործառնությունները, աշխատանքի կազմակերպման նրբությունները, ինչպես նաև շենքերի հատակագծային առանձնահատկությունները և կահույքի չափերը,

- Կոմիտեի կողմից վարձակալվող կամ սեփականություն հանդիսացող շինությունների կամ տարածքների ծավալային և հատակագծային առանձնահատկությունների նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում և ներկայացում,

- մրցութային հայտերով ներկայացված ապրանքատեսակների ընդունում, համապատասխան դրական կամ բացասական եզրակացության տրամադրում,

Գ. Կոմիտեի շինարարական, վերանորոգման և կահավորման աշխատանքների հայտարարվելիք մրցույթների տեխնիկական առաջադրանքների նախագծերի կազմում, մասնավորապես՝

- առաջիկայում կառուցվող շենք-շինությունների, ինչպես նաև ընթացիկ վերանորոգման և կահավորման աշխատանքների առաջադրանքների կազմում,

- կահավորման առանձին միավորների նախագծում, նյութերի և գունային բաժանումների ընտրություն, հաշվարկում և տեղաբաշխում,

- կահույքագործ կազմակերպությունների հետ նախնական նմուշի համաձայնեցում:

2. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով Կոմիտեի կողմից իրականացվելու են մի շարք անհետաձգելի միջոցառումներ, որոնց շրջանակներում կստեղծվեն նաև նորագույն պահանջներին ամբողջությամբ բավարարող նոր սպասարկման գրասենյակներ՝ նորարարական համակարգերով: Միջոցառումների իրականացման արդյունքում նախատեսվում է.

- Կոմիտեի վարչական շենքի և գլխամասի վերահատակագծում, վերանորոգում և կահավորում (իրականացումը՝ 2020 թվականին),

- Գլխավոր՝ «Արաբկիր» սպասարկման գրասենյակի ընդլայնում և կահավորում (իրականացումը՝ 2020 թվականին),

- 10 մարզկենտրոններում տեղակայված սպասարկման գրասենյակներ հիմնանորոգում և կահավորում (իրականացումը՝ 2020-2021 թվականներին),

- 20 հենակետերի (սպասարկման կետերի) կահավորում (իրականացումը՝ 2020 թվականին),
- 6 քաղաքային գրասենյակներ նորոգում և կահավորում (իրականացումը՝ 2022 թվականին),
- Արխիվային մասնաշենքի հիմնանորոգում, ընդլայնում և կահավորում (իրականացումը՝ 2022-2023 թվականներին).
- Կոմիտեի վարչական շենքի և առանձնացված ստորաբաժանումների արխիվային հատվածների նոր մասնաշենք տեղափոխման արդյունքում ազատված տարածքների վերատեղաբաշխման վերահատակագծում և կահավորում (իրականացումը՝ 2022-2023 թվականներին):

3. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսվող աշխատանքների նպատակն է պետական կառավարման մարմնի կողմից մատուցվող ծառայությունների սպասարկման որակի բարձրացումը, աշխատանքների ու գործառույթների արդյունավետ ու համակարգված կնձմակերպումը, գործունեության իրականացման համար հարմարավետ և ժամանակակից պահանջներին համապատասխանող միջավայրի ապահովումը:

Այս նպատակի իրականացման հիմնական խոչընդոտն է համակարգում ներգրավված ծառայողների նեղ կադաստրային ոլորտային գիտելիքները: Այդ պատճառով առաջարկվում է Բաժնի աշխատանքներում ներգրավել մասնավոր սեկտորում համապատասխան փորձ ունեցող մասնագետների, որոնք կկարողանան երկարաժամկետ ծրագրերի համատեքստում կարճաժամկետ կտրվածքով ապահովել որակական շոշափելի փոփոխություններ:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Նոր մասնագետը իր առջև դրած խնդիրները լուծելու համար պետք է տիրապետի հետևյալ հմտություններին.

- չափազրման աշխատանքների իրականացում,
- հայեցակետային նախագիծ-առաջարկների տարբերակների մշակում,
- նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրության իրականացում,
- սահմանված ստանդարտներին համապատասխան վերահատակագծում,
- ջեռուցման, օդափոխության համակարգերի աշխատանքային նրբությունների տիրապետում,
- էլեկտրամատակարարման և ցածր լարման հոսանքալարերի աշխատանքային նրբությունների տիրապետում,

▪ քանդման աշխատանքների ու հարդարման ծավալների վերահաշվարկում նախահաշվային փաստաթղթերի համար հիմք հանդիսացող թերությունների ակտի կազմման նպատակով,

▪ մասնագրերի կազմում և/կամ ստուգում,

▪ աշխատանքային գծագրերի ավրոմի կազմում և/կամ եզրակացության տրամադրում,

▪ շինարարական աշխատանքների ընթացքում հսկողության ապահովում, այդ թվում՝ ընթացիկ փոփոխությունների համակարգում,

▪ համապատասխան տեխնիկական առաջադրանքների նախագծերի կազմում,

▪ կահույքի գծագրային և տեխնիկական առաջադրանքների փաթեթների կազմում:

Կոմիտեի աշխատանքների կազմակերպման այս գործառույթը իրականացնող փորձագետը անհրաժեշտ է ունենա հետևյալ համակարգչային գիտելիքներն ու հմտությունները՝ Microsoft Office Word, Excel, Powerpoint, անցանց այլ ծառայություններից օգտվելու և ուսումնասիրելու կարողություն, ինչպես նաև մասնագիտացված համակարգչային ծրագրերի իմացություն, մասնավորապես՝ Autodesk AutoCAD, CorelDRAW կամ Adobe Illustrator, Adobe Photoshop, Adobe Acrobat Pro:

Հաշվի առնելով Բաժնի հիմնական աշխատակիցների նեղ ոլորտային գիտելիքները և ծանրաբեռնվածությունը՝ այդ աշխատանքներն իրականացնելու համար Բաժնին անհրաժեշտ է ճարտարապետական կրթություն ունեցող փորձառու մասնագետ: